



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2017 թվականի N°--Ա
քաղ. Երևան

**«Ն. ԱՆԻ ՄՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ N°0298 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2007 թվականի դեկտեմբերի 28-ի N°689Ա որոշմամբ «Ն. ԱՆԻ ՄՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման N°0298 թույլտվության պայմաններով (այսուհետ՝ թույլտվություն) սահմանված բազային ռադիոկայանի տեղադրման վայրը Երևան քաղաքի Սայաթ-Նովայի 21 հասցեն է,

բ) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի օգոստոսի 23-ի N°03/11.1/15614-17 գրությամբ Հանձնաժողովը տեղեկացվել է, որ ընկերությանը պատկանող բազային ռադիոկայանը տեղափոխվել է Երևան քաղաքի Նար-Դոսի 72 շենքի բակ,

գ) Հանձնաժողովը 2017 թվականի օգոստոսի 25-ին վարչական վարույթ է հարուցել ընկերության նկատմամբ՝ թույլտվությամբ նախատեսված բազային ռադիոկայանի տեղադրման վայրի փոփոխության փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 25-ի N°ԱԲ-2245Հ գրությամբ,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրվող հարցի կապակցությամբ ընկերությունը որևէ փաստարկ կամ հիմնավորում չի ներկայացրել,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում պարզվել է, որ ընկերության կողմից առանց Հանձնաժողովի համապատասխան որոշման բազային ռադիոկայանի տեղադրման

վայրի փոփոխությունը առաջացրել է օրենդորության պահանջներին չհամապատասխանող ճառագայթումներ, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը, 12-րդ հոդվածի 1-ին մասը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի N°231Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ և 16-րդ կետերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կասեցնել Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «Ն. ԱՆԻ ՄՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» N°689Ա որոշմամբ ընկերությանը տրամադրված թույլտվության գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Ընդունել ի գիտություն, որ թույլտվության գործողության կասեցման ժամանակահատվածում ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները ենթակա են վճարման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ